ձեր վկայեմ հայրապետական աստիճանաւս, որ և աւսպէս 'ի վկայութիւնս մեր հաստատ և անսուտ գիտելով լերուք ողջ և օրհնեալ։ Գր. ի 1849 և նոյեմ. 17 ի սուրբ Աթոռս Կիլիկիոյ մեծի հրաշալեաց։

2 կնիք ձախ կողմից.—Միքայէլ Կաթողիկոս
ՌՄՁՐ

Է.

Գլխին հրեշտակների մէջ մեծ կնիք Հայրապետական.

Հ. Ց. ՋՈՀՐԱԲԵԱՆԻ ԹՈՒՂԹԸ [1])

Օրինակ թղթոյն յովհաննէս վարդապետին զոհրաբեան, զոր գրէ առ ազգականս իւր 'ի Փարիզու։

Պատուական և սիրելի եղբօր որդւոյ իմոյ պարոն Մկրտչին ողջոյն և օրհնութիւն։

'Ի փարէզ 1819, դեկտ. 26։

(յետ բազում բանից գրէ այսպէս։)

Բայց ալէսէվիէ քաթօլիկաց հալածումին բանը քեզմէ կը լըսեմ։ Գամք որ՝ այս բանիս մէջը. որդիք, աչվընիդ բացէ՛ք, որ պօշ տեղը դուք ալ արան չերթաք, դուք ձեր ուղիղ քրիստոնէական հաւատքը պահելով՝ առանց խղճմտանաց ձեր ազգի ժամէն ետ մի՝ կենաք երթալու. անճամի չէ, սինօվա չէ, հոն ալ նոյն քրիստոսը և աստուածածինն է, որն որ Ֆրէնկին ժամը. այրըսէզի չիկայ, և ասանկ կըսեն նաև Ֆռէնկիստանի Ֆռէնկները. ու երբ որ կը լըսեն թէ՝ հայոց ազգը երկու Ֆռխայ եղած՝ մէկ վմէկը կհալածէն, հախը բուն հայերուն կուտան, քաթօլիկները էշէկ են կըսեն, որ այս պատճառով, ըսարկէ կելլան, բանտը կը մտանան. ասանկ ըսելին լսած է՝ նաև փափին քարտինալներէն և փռելարներէն. որ մեր խեղճ միամիտ քաթոլիկները տգիտութեամբ կզոհվին, եօխ կըլլան։

Ուստի դուք, ինչպէս ըսի՝ խելքերնիդ գլուխնիդ ժողվեցէ՛ք, դուք ազգաւ հայ էք, ձեր պատրիարգին պէտք է՝ որ հնազանդիք, որ յայտնի ճշմարիտ հաւատոյ դէմ բան

---

[1]) „Նամակագրութիւնք Նախնեաց" գրչագրից։

ձեզի թէքլիֆ չըներ. հապա՝ շատ շատ ձեզ պիտի ըսէ թէ՝ քաղկեդոնի ժողովքը մի ընդունիք. դուք ալ ըսէք թէ՝ մեք աստուածաբան չեմք. անոր ուղիղ—հաստատ պատմութիւնը չեմք գիտեր, թէ որ աւետարանին ներհակ է նէ՝ չենք ընդուներ, և նզովելով կը նզովեմք։ Ուածներուս վերայ չը-պղտորիք, զէրէ փորձով գիտեմ ըսածը։ քսան տարիէն էվել է, որ Ֆռէնկիստանի մէջ ուղղափառ ըսածներուն հետը կը վարվիմ, միշտ հետերնին կը մտնամ կելլեմ, և աս կսեմ որ ճշմարիտ քրիստոնէութիւնը հայու ազգին մէջը կը պահի, (իմացիր ալէքսէվիյէ) բոլոր ազգը քաթոլիկ ըլլայ չըլլա. և Ֆռէնկներուն խելացին ու բարեպաշտն ալ ասանկ դատատան կընէ տեսնելով իրենց քրիստոնէութիւնը։

Իսկ ընդհանրապէս Ֆռէնկներն այս հալածանաց բանին վրայ մասխարա ընելով մեր բոլոր ազգը, եօնղուն լեռնցի տեղ կը դնեն, և հռոմայի քօռթէն կը մեղադրեն, և անողորմ և անգութ է կըսեն, որ իրեն կեղծաւոր սօֆիութեամբն պատճառ կըլլա այն միամիտներուն վնասուցը։ Հերիք չէ՞ մի՝ որ մեր խղճալի ազգը այլազգեաց թօփուզին տակը պէրպաթ եղած է. ահա էօրինէկը թաղէ առջևնիդ կեցեր է։ աս կաթոլիկութիւն մատէն ալ մասնաւորապէս մեր հայ ազգին մէջը ընկած, ան սիպելով ազգերնիս ամէն տեղ իր հանգստութիւնը կորսընցուցած պէրպաթ եղեր է. և ասով մասխարա է բոլոր ազգին առջևը, տաճկին, չֆտին, հռոմին, նաև Ֆռէնկին։ Ֆրռէնկին կըսեմ, որոց հաւատքին խաթերը համար մեր շաշեն հայերը ճիտերնին կուտան. որ հաւատքին գլխաւորները հռովմայ ըոլոր զէֆքի մէջ խըղդըված են։ տահա շատ բաներ կան ըսելու այս մատէիս վերայ, բայց տեղս չի տաներ. գիտեմ որ՝ աս բանըս մեր անմիտ ազգին հասկըցնելու և ուղեղնին խօթելու է՝ պէ՛տք, որ մէկ մը արթընան, նային, թէ ինչ հալի մէջ են՝ այլ ճար չիկա, այս միայն գրեցի սաստիկ սրտիս կսկիծէն, որ պարէ ձեզ զգուշացուցանեմ, որ աչվընիդ բանաք, և պօշ տեղը էշ նահատակ չըլլաք, ինչպէս կըսէ ռամկաց առակը, քիչէն շատ իմացիք։

Ողջ լերուք հօր եղբայր ձեր հայր յօհաննէս վարդապետ զօհրապեան։